№ 17. Մայիսի 4. — 1872 — Մայիսի 4. № 17.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (Օրբելու տուն) և իվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆ՝

Փոքրագոյն յայտարարութիւն տպել տալուը պիտի վճարւի 10 հապարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յանցաւորներ և հասարակութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Պատերազմից յետոյ։ Մշակների վիճակը։ Ֆրանսիա։ Նամակ Թէհրանից։—Բանասիրական։ Ալսի Գէվօ։—Առևտրական։—Յայտարարութիւններ։

ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

Ինչպէս է նայում մարդկային հասարակութիւնը իր այն անդամների վերայ, որոնք մի որ և է յանցանք են գործում։

Թէ հին ժամանակներում, թե մինչև մեր վերջին ժամանակները հասարակութիւնը միայն երկու միջոց էր ճանաչում յանցանքի դէմ ներգործելու։ Այդ միջոցներից մէկը քարոզ էր, թէ եկեղեցու, թէ գրականութեան, թէ ուսումնարանի մէջ,—երկրորդ միջոցը պատիժ էր։

×

Ուրեմն հասարակութիւնը այդպէս էր մտածում, մարդը միշտ և մէնակ մեղաւոր է, որ մի յանցանք է գործում, որ յանցաւոր է դառնում։ Որ նա յանցանք չը գործէ, հարկաւոր է նորան խրատել, քարոզել, դաստիարակել,—իսկ եթէ այնուամենայնիւ նա չը հետևեց բարոյական խրատներին,—այն ժամանակ պատժել։

Պատիժն էլ իր կողմից զանազան ձևեր ունի։ Ամենից հեշտ միջոցը հասարակութեան համար ազատվել մի յանցաւորից,—նորան սպանելն է։ Սպանելով մարդին հասարակութիւնը հեռացնում էր իր միջից մի յանցաւորին, ազատվում էր նորանից, և ուրիշ կողմից կարծում էր, որ մահու պատժի սարսափելի օրինակով մնացած մարդիկների մէջ ծնվում է բարոյական երկիւղ։

×

Ուրիշ կողմից հասարակութիւնը կարծում էր, և մինչև այժմ շատերը կարծում են, որ դաստիարակելով երեխային, հիմնելով բազմաթիւ ուսումնարաններ յանցաւորների թիւը հասարակութեան մէջ նուազվում է։ Կըրթեցէք մարդին, ասում են, բարոյապէս զարգացրէք նորան և նա յանցանք չի գործի...։ Բարոյական վարդապետութիւնը ասում է թէ մարդին բարոյական անելով, դուք նորան ազատում էք յանցանք գործելուց։ Աստուածաբանական վարդապետութիւնը կարծում է, որ մարդին յատկանիշ է հակումն դէպի չարը ուրեմն ձգտումն դէպի չարագործութիւն։ Որպէս միջոց նա առաջարկում է բարոյական քարոզ, սէր, հաւատ, եղբայրասիրութիւն, երկիւղ Աստուծու առաջ։

×

Այդ բոլոր մտքերը ուղիղ են, առաջարկված միջոցները լաւ են, բայց բաւականացուցիչ չեն, ըմբռնում են միայն գործի էութեան մի կողմ։ Այդ հայեացքները միակողմանի են։

×

Կայ մի գիտութիւն,—վիճակագրութիւն (ստատիստիկա) որը մեզ ցոյց է տալիս թէ մարդկային հասարակութեան մէջ ամէն կենսական երևոյթները զարմանալի կանոնաւորութիւն ունեն. ճշգրտութեամբ հաւաքված թուանշանները ցոյց են տալիս մեզ, որ այս ինչ կամ այն ինչ երկրի մէջ տարեց տարի մեռնողների, ծնունդների, պսակների և բոլոր ուրիշ կենսական երևոյթների թիւը ենթարկված է մի բնական օրէնքին, զրեթէ հաւասարապէս կրկնվում են, զրեթէ ամեն տարի այդ երևոյթների միևնոյն թիւ է լինում մի երկրում։

×

Ուրիշ կողմից ճիշդ գիտութենից մենք իմանում ենք, որ բարեկարգ երկրում, այս ինչ կամ այն ինչ հիւանդութիւնը, օրինակ, այնքան յաճախ չէ պատահում, որքան հասարակապէս սառին աստիճանին կանգնած երկրում։ Նմանապէս մարդի միջին կեանքի տևողութիւնը աւելի մեծ է, (մարդիկ աւելի են ապրում) այն երկրում, որտեղ աւելի ապահովացրած է ամեն կողմից մարդի կեանքը որտեղ աւելի ազատութիւն կայ, որտեղ հիմնարկութիւնները լաւ են։

×

Վիճակագրական ճիշդ տեղեկութիւններից երևում է նմանապէս, որ մի յայտնի հասարակութեան մէջ տարեց տարի յանցանքների զրեթէ հաւասար թիւ է պատահում, այդ բաւական չէ, այս ինչ կամ այն ինչ տեսակ յանցանքների թիւը նմանապէս հաւասար է։ Վերառնենք, անձնասպանութիւն մի մեծ կենդրոնում, օրինակ Լոնդոնում։ Ճիշդ թուանշաններից երևում է, որ ոչ թէ միայն տարեց տարի այն քաղաքի մէջ գործվում է անձնասպանութիւնների հաւասար թիւը, բայց և անձնասպանութեան առանձին տեսակները, կամ ձևերը զարհուրելի կանոնաւորութեամբ կատարվում են։ Այսքան մարդ, մօտաւորապէս, սպանվում են Լոնդոնում տարեց տարի հրացանով, այսքան թարճանակով, այսքան կախվելով, այսքան թունաւորելով իրանց...և այլն։

×

Եթէ ամեն կենսական երևոյթները հաւասար թուով են կրկնվում մի հասարակութեան մէջ,—մենք պիտի երկուսից մինը ընդունենք. կամ մենք ոչինչ չենք կարող փոխել հասարակութեան մէջ, բոլոր մեր յոյսը պիտի կորենք օրինակ յանցանքների թիւը երբէք պակասցնել կարողանալու, ուրեմն և բարոյական քարոզներով չենք կարող գործի էութիւնը փոխել,—կամ եթէ զանազան երկիրներում թէ յանցանքների, թէ ուրիշ երևոյթների թիւը տարբեր է մէկ մէկից, և որ նիւթապէս և բարոյապէս բարձր աստիճանին կանգնած երկրում թէ մեռնողների թիւը, թէ հիւանդութիւնների յաճախութիւնը, թէ յանցանքների թիւը համեմատաբար պակաս է քան թէ զարգացման ստոր աստիճանին կանգնած երկրում,—այն ժամանակ մենք պիտի ձգտենք ամբողջ հասարակութեան դրութիւնը և կազմակերպութիւնը փոքր առ փոքր փոխելու։

×

Մի՞թէ ամեն բան կախված է նորանից, որ մարդ ուսումնարանում ուսում է առել. մի՞թէ ուսումնարանում եղած մարդը երբէք յանցանք չէ գործի։ Բայց եթէ ուսումնարանը միայն ուսում է տուել մարդին, բարոյապէս և մտաւորապէս կրթել է նորան, իսկ չէ տուել աղքատ մարդին միջոց մի որ և է արուեստ սովորելու, ուրեմն չէ տուել նորան աշխատելու իրաւունքը, չէ տուել նորան կարողութիւն ուսումնարանից դուրս գալուց յետոյ գործ գտնել կեանքի մէջ իր սովորածը,—մի՞թէ այն մարդը ամբողջ կեանքի մէջ փըրկված է յանցանք գործելուց։

Ուրեմն պէտք է մտածել և մարդի նիւթական ապահովութեան մասին։

×

Բայց մի՞թէ ապահովացած, հարուստ մարդը երբէք յանցանք չէ գործում։ Ինչպէս չէ։ Միայն թէ հարուստ մարդը ուրիշ տեսակ յանցանք է գործում քան թէ աղքատը։ Հարուստը չի կանգնի մեծ ճանապարհում և աւազակութիւն չի անի, կամ գիշերով գողութիւն չի անի,—բայց արդեօք չէ կարող պատահել, որ նա սպանի իր կընոջ իր սիրեկանի օգնութեամբ, կամ սուտ վկայութիւն տայ կամ կաշառք ուտի և այլն...։

Թէ հարուստ թէ աղքատ կինը կարող է դիցուք, իր երեխային սպանել,—միայն շարժառիթները տարբեր կլինին։

×

Վերառնենք օրինակներ։ Դուք քարոզ էք կարդում մարդիկների հաւաքված մի խումբին, որ մարդս պիտի առաքինի լինի, որ նա երբէք չարագործութիւն չ'պիտի գործի։ Քարոզից յետոյ այն մարդիկներից մէկը գընում է և գողանում է, որովհետև այն տարի հողը բերրի չէր, որովհետև նա միջոց չունի իր ընտանիքը և իր անձը կերակրելու։ Եթէ լինէր, դիցուք, մի գանձարան, որտեղից նա մի գումար փոխ ուզել կարողանար, կարելի է նա յանցանք չէր գործի։

Ուրեմն փոխանակ քարոզելու բարոյականութիւն, քարոզեցէք ժողովրդի համար զանազան ընկերակցութիւններ հիմնելու միտքը, և աշխատեցէք իրագործել այդ միտքը։—Բայց այդ տեսակ հիմնարկութիւնները իրագործելու համար դարձեալ հարկաւոր է մի գլխաւոր բան,—այն է զանազան ընկերակցութիւններ հիմնելու ազատութիւնը մի հասարակութեան մէջ։

×

Ուրիշ օրինակ մի յանցաւոր բռնվում է. նորանից հարցնում են նա ինչ պարապմունք ունի.—նա պատասխան է տալիս թէ ոչինչ պարապմունք չունի և ոչ մի արուեստ չէ սովորել։ Կարելի է, որ եթէ նա մի որ և է արուեստ գիտենար, նա կ'աշխատէր, և յանցաւոր չէր լինի։ Բարեկարգ երկրում հիմնած են այնպիսի տներ, որտեղ փոխանակ յանցաւորին պատժելու, նստեցնում են միայն նորա համար, որ նորան մտաւորապէս կրթեն և սովորեցնեն մի արուեստ, որի միջոցով նա բերդից դուրս գալուց յետոյ, կարողանար իր համար ապրուստի հնարը իր աշխատանքով ճարելու։

×

Դարձեալ մի օրինակ, որը բերում է մի յայտնի Ֆրանսիացի իրաւաբան Ֆրանսիական կեանքից։ Մի պսակված արուեստաւոր արբեցող է, նա մսխում է բոլոր իր ունեցածը, իր կնոջ աշխատանքի վերջին արդիւնքը. կինը ընդիմադրում է նորան. բայց ամեն անգամ ծեծվում է իր ընդիմադրութեան համար։ Կինը գանգատում է դատարանը, բայց պատասխան է ստանում. թէ օրէնքով բոլոր անշարժ և շարժական կայքը մարդին կնոջ նորա կենդանութեան ժամանակ, որ նա տէր է իր ունեցածի վերա։ Կինը ուզում է բաժանվել մարդից, — երկրի օրէնքների զօրութեամբ թոյլ տուած չէ ամուսնութեան մէջ բաժանվելու։ Մարդը շարունակում է խմել և վերջին միջոցները մսխել...վերջապէս նա տուն մտնելով ուրիշ բան չէ գընում, բացի իր երեխայի օրօրոցը,—խլում է նորան մոր ձեռքից և այն էլ ծախում է խմելու համար...կինը շփոթված, վըրդովված, զայրացած դրութեան մէջ սպանում է մարդին ..։ Ո՞վ է մեղաւոր այդ յանցանքի մէջ, կամ ով է եղել կատարած յանցանքի հիմնական պատճառը,—երկրի օրէնսդրութեան անկատարելութիւնը։ Օրէնքը վատ է մի երկրի մէջ, նա կարօտ է վերանորոգութեան,—այդ վերանորոգութեան չ'լինելու պատճառով կատարվեցաւ այս ինչ կամ այն ինչ յանցանք։

×

Ուրեմն յանցանքների դադարելն պատճառը մի հասարակութեան մէջ շատ բազմագրեալ է։

Մարդը յանցանք է գործում, երբ նա դատում չունի,—բայց և ուսում ունենալով և նիւթապէս ապահովացրած չ'լինելով նա կրկին կարող է. յանցանք գործել։ Մարդը աշխատասէր է և ապահովածնում է իր անձը,—բայց մի տարաբաղդ դիպված նորան յանցաւոր է շինում. իսկ այն երկրի մէջ չ'կան այնպիսի հիմնարկութիւններ, որոնք այն տարաբաղդ դիպուածների առաջն առնել կարողանային։

Կարելի է ժողովուրդը պատրաստ է հիմնարկութիւնները իրագործել,—բայց հասարակութեան մէջ չ'կայ այնքան ազատութիւն, որ թոյլ տուած լինէր զանազան ընկերակցութիւններ հիմնելու։

Վերջապէս մարդը բոլորովին ուսումից զրկված էլ չէ, նիւթապէս ապահովացած է, կամ գիտէ իրան նիւթապէս ապահովելու,—բայց յանցանք է գործում, որովհետև նորան երկրի օրէնքը չէ պաշտպանում, որովհետև օրէնսդրութիւնը այնքան կատարեալ չէ, որովհետև ինքն օրէնսդրութիւնը կարօտ է վերանորոգութեանը։

×

Անցած դարերը չէին ճանաչում այն գիտութիւնները, որոնց մենք այժմեան դարում անուանում ենք ճիշդ գիտութիւններ։ Այն դարերի գիտութիւնը հիմնուած էր

երևոյթներից ծնված հետևանքների դատողութեան վերա,—մեր այժմեան ճիշդ գիտութիւնը հետազօտում է պատճառներ, հիմնվում ճիշդ փորձի վերա:

Այդ ճիշդ գիտութիւններից մէկը և վերակացրութիւնն է: Մենք պարտական ենք այդ գիտութեանը, որ հասարակական բազմաթիւ երևոյթների վերաբերութեամբ մենք փոխեցինք մեր կարծիքը, նորան ենք պարտական, որ քանի մի վերանորոգութիւններ կատարվեցան հասարակութեան մէջ, փոփոխութիւններ մտցնվեցան օրէնքների մէջ: Վերակացրութիւնը մի սաստիկ հարուածտուեց հին տեսութիւններին, և դարձեալ պիտի շարունակէ նոր հասարակական կիւտեր անել, և նորա ճիշդ մեթոդի հետևանքը պիտի քննադատական ազդեցութիւն ունենայ թէ հիմնարկութիւնների, թէ օրէնքների և օրէնսդրութեան վերա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Երեք օր է Հաւիճոյ վանքումն ենք, դու այստեղ բաւականին տեղեկութիւններ քաղեցիր քո երևակայական ընկերութեամբ. ձի նստինք ուրեմն և Արագածի ստորոտովը խորտ ու բորտ ուղևորով գնանք դէպի յԱրևելս հարաւոյն դէպի Աբարան:

Կանգնենք այս փոքրիկ լճակիս մօտ, սա Ձիլլի կոչված գեօլն է, տեսնում ես որքան անհամար գորտեր կան, բայց դոքա երբէք չեն կրկռալ, երևի ջրի կամ օդի ազդեցութիւնից է, իսկ աւանդութիւնը այդ բանը տալիս է մի քահանայի անիծքին, որից յետոյ էլ գորտերը ձայն չեն հանում:

Առաջուց իմացիր, որ այս տեղ շատ երկիւղալի է, Շիրակայ Թուրքերը և ահա այն արևելեան կողմի լեռան ստորոտումը երևեցող երեք չորս գիւղերի Եղիդի կոչված Քրդերը բաւականին վնասներ են տալի այս տեղ ճանապարհորդին: Այս տեղը կարելի է համարել Շիրակու և Աբարանու սահմանամէջը: Բայց դեռ չանցած Աբարան, համառօտապէս ծանօթացիր այդ Եղիդիների հետ: Դոքա Քրդի մի ցեղ են, կրօնով անորոշ դրութեան մէջ. ես կարծումեմ, որ մի քանի մեայլ աւանդութիւնների են հետևում, որը մահմեդականութեան և կռապաշտութեան խառնուրդ կարելի է համարել. դոքա չեն դարձում քրիստոնեաներից, անխըտիր ուտումեն նոցա հետ և խմումեն դինի, և շատ անգամ յարգում և պատկառանք են բերաններից դուրս թողնում սատանայի անունը, մինչև անգամ մոմ են վառում նրա անունովը. այդ պատճառաւ էլ շրջակայ բնակիչները և ազգերը կարծումեն, որ Եղիդիքը սատանայապաշտ են:

Աւելորդ եմ համարում ասել քեզ, որ այս տեղերը բոլորը Հայերինն է: Ահա այն Չարչառիս կոչված գիւղի աւերակն էլ Հայոց եկեղեցու մնացորդ է, և Եղիդիքը շատ յարգումեն և իրանց հիւանդների պաշտպանն ու փրկիչն են համարում: Այս Քրդերը որքան արենարբու և աւազակ են դուրսը, իրանց մէջը շատ հիւրասէր են, որքան էլ ունենան թշնամութիւն մէկը միւսի հետ, եթէ նա գիտէ և իւր հակառակորդին ապաւինի, նա իւր գլուխը մահու կը տայ և թէ ինքը կը ներէ իւր թշնամու իւր դէմ ունեցած յանցանքը և թէ նրան օտար թշնամու ձեռքից կը փրկի: Սոքա ապրում են հովուութեամբ և շատ սակաւ երկրագործութեամբ: Անմիջապէս յարաբերութիւն ունենալով Աբարանի Հայերի հետ, ամէնքն էլ գիտեն հայերէն: Նահապետական կեանքը թէպէտ Շիրակու և Աբարանի Հայերի մէջն էլ է, բայց սոցա բոլորովին կարելի է համարել նոյն իսկ նահապետական դարումը. չունին ոչ գիր և ոչինչ լեղուով կարդացող: Իրանց հոգևորականը իրանցից մէկն է, որ ժառանգական է և գիտէ միայն բերան սովորած մի քանի իրանց կրօնին վերաբերեալ աղօթներ: Եղիդիքը թէպէտ Ռուսաստանի հպատակներ են, բայց կառավարվումեն, համարեա, իրանց նահապետներով, որին աղա կամ էլչի անուն են տալի: Ահա այդ դիմացի Մերաք գիւղումն է դրանց աղէն, որին դիմումեն ամէն հարցերումը. իսկ այդ աղէն էլ ոչինչ բանով չէ զանազանվում իրանցից թէ հասկացողութեամբ և թէ կառավարութեամբ: Նոցա գլխաւոր զէնքը թուրն է, տէզը, վահանը և մի հասարակ ցուլ:

Այս մի բուռ ժողովուրդը վաղուց հայացած կը լինէր, եթէ Աբարանումը գտնվէին մի երկու հասկացող քահանայք. շատ հակամիտ են հայ քրիստոնէութեան: Մի խօսքով Եղիդիքը որքան դուրսը արիւնարբու դաղանները են, նոյնքան հեզ և հիւրասէր են իրանց յարկումը:

Անցնենք ուրեմն այս փոքրիկ հեղեղատը և ահա Աբարանու դաւառը այս ձորաղաչին է, որ տեսնումես: Աբարանու բոլոր գիւղերի բնակիչքը Հայեր են զաղթած Մշուց, Բաղէշից և Քուրդիստանից: Բոլոր գաւառի բարբառը Քուրդիստանի-հայերէնն է: Ահա քեզ մի ուրիշ գաւառ: Շիրակը սրանից աւելի մխիթարական է: Չնայեցեալ որ Աբարանն էլ Շիրակից ոչ պակաս բարեբեր է, բայց պտուղ բոլոր գիւղերը և կը գտնես ամենամեծ աղքատութիւն:

Ամբողջ դաւառումը շատ քիչ կը գտնես հասկացող անձն. վերջին աղքատիցը մինչև տէրտէրն ու մէլիքը, բոլորն էլ նահապետական դրութեանումն են: Մէլիքութիւնը սրանց համար համապատասխան է Քրդերի աղայութեանը: Մինչև վերջին տարիներս մէլիքը նրանց նահապետն էր, նա էր սրանց դատաւորը և հայրը: Այդպիսի մէլիքներ բոլոր Աբարանի համար երկու կամ երեքն էին և ամբողջ դաւառը մէլիքների թուին համեմատ կուսակցութիւն էր կազմում:

Այս ժողովուրդը բոլորովին նման է Քրդի, թէ հագուստով, թէ կեանքով և թէ շատ տեղ լեզվով: Քրդի լեզուն սոցա մէջ թէպէտ գործածական չէ, բայց ամէնքն էլ լաւ իմանումեն. նոյն իսկ Հայոց արտասանութեանն էլ Քրդի հնչիւն են տուել:

Երկրագործութիւնը այս տեղ շատ արդիւնաբեր է. թէպէտ բացի ցորեանից դարիից և հաճարից ոչինչ բերը չի յառաջ դալի Արագածից յառաջացած ցրտութեան պատճառաւ, բայց այդ կենսական պիտոյքները շատ առատ են:

Եթէ Աբարանցիք կարողանային օգուտ քաղել Արագած սարիցը, շատ լաւ կարելի է Աբարանցւոց ձիանց ջոկեր և ոչխարաց հօտեր պահել: Բայց այդ խոտաւէտ լեռը տալիս է Աբարանին իւր ցուրտն ու ձիւնը, իսկ օգուտը քաղումեն Թափառական Քրդերն ու Զօբանքերայ կոչված Պարսկայ ցեղը, որոնք ամբողջ ամառը վրանաբնակ են այդ սարի վրա իւրեանց հօտերովն ու անասուններովը և մեծ մեծ վնասներ են հասցնում խեղճ Աբարանցւոց, փչացնելով նոցա հերկն և դաշտութիւններ անելով, որոց մասին յաճախ անպատիժ են մնում:

Բոլոր Աբարանումը չես գտնել մի ուսումնարան. միմիայն տեր հայրն իւր որդուն սովորցնումէ բերանացի կամ գրաւոր եկեղեցական արարողութիւնները և նա փոխարինեց իւր հօր պաշտօնը: Դու երբէք մի զարմանար, թէ ինչպէս այս ինչ տղան, քահանայանումէ: Դեռ բեր սրանից լաւը և ապա պահանջիր: Բայց միթէ չէ կարելի մի փոքրիկ արդիւնք դոյացնել դաւառից և որ և իցէ գիւղում մի փոքրիկ դպրոց բանալ գտնէ տարրական ուսման համար, հարցնումես դու: Այո, շատ կարելի է, մանաւանդ թէ մօտ լինելով Երևանին շատ յարմարութիւններ ունի, բայց...

Ես երբեմն մի վերապատուելու—հետ. խօսակցութիւն ունեցայ այդ մասին և նա փաստերով հաստատումէր Աբարանումն ուսումը տարածելու Ճնսը իւրեանց ջերմեռանդութիւնը չը պակասելու համար:

„Ես արդարև Աբարանցւոց ջերմեռանդութիւնը շատ մեծ է, նոքա ոչ միայն ամէն տարի իւրեանց դաշն աշխատութիւնից բաժին են հանում սուրբ Էջմիածնի պատուդ, անուանեալ տուրքին, իւղ պանիր, դարի, ցորեն, ձու, հաւ, և այլն. այլ և լիսեռն պարդևում են պատուդ ժողովելու համար եկած և իւրեանց դոմի օդայումն եղած գործակալին հերթով էլ նրա համար սեղան տանում նրան համադամ կերակուրներ և փոխարէն նրա սուրբ օրհնութիւնը ստանալով տանում բաժանում իւրեանց ցանքի ու հօտերի վերայ:

Աբարանցի Հայիցը փող մի ուղիր որ և իցէ բանի համար, և դուն կը հանես քո փափագին եթէ երկրի բերքից խնդրելու լինիս: Տարին մինչև 2,000 մանէթ կարելի է շատ հեշտութեամբ և յօժարութեամբ մի փոքրիկ ուսումնարանի համար փող հանել Աբարանցւոց տուած բերքից:

Այս բանը ես պէտք է յայտնեմ մեր Երևանու առաջնորդին:

Այս գիշեր իջևանեցինք Մէլիքի տանը և դու զարմացար, որ քեզ բացի մի կարպետից և կեղտոտ թաղիքից ուրիշ անկողին չը տուին և դու ոչ մի տեղ Աբարանումը չը գտար մի սենեակ, որ կարելի լիներ փոքր ինչ հանգստանալ: Սա Աբարանու ամէնքից լաւ տունն է: Անկողին Աբարանումը ոչ մի տուն չես գտնել, սոցա մահիճները խոտ իսկ վերմակները կարպետ, ամենաաղնիւ սենեակներն էլ գոմերի օդէքը ուր անասուններն էլ կապուած են: Աբարանցուն ինչ հոգն է թէ դու միլիոնաւոր լուերի ձեռքից չես քնել, իրան համար լուն սովորութիւն է դարձել և նրա խայթոցից չի վախենում, իսկ գոմերի դարշահոտութիւնն էլ նա այնպէս է սովորած ինչպէս դու պարզ և մաքուր օդին. ոչ ապաքէն նրանց վառելիքն էլ տաւարի աթար է և այլ ոչինչ:

Դու այժմ տեսար Աբարանու 30-ից աւել բոլոր գիւղերը համանման, ընտանեկան կեանքը Շիրակայ նման, կերածները պահոցը ցամաք հաց, իսկ ուտիսին թանի ապուր, տեսար այն ամէն գիւղերում եղած թաց կամ չոր միրք ծախող հայերին որոնք իրանց ապրանքը փոխումեն, իւղի, պանիրի և դարիի հետ, նոքա Աշտարակեցիք են կամ Աբարատեան դաւառի մի քանի գիւղերի բնակիչներից, նոցա՛ չնորհքովն են մրքի համատեսում Աբարանցիք: Շտապիր ուրեմն անցնենք և Արարատեան դաւառը և այն տեղ դտնենք ուրիշ կեանք:

Պահլաւունի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս օրերս Թիֆլիսի քաղաքական թատրոնում ներկայացվեցաւ հայերէն լեզվով „Թուղթ խաղացողի կեանքը": Դարձեալ քիչ ժողովուրդ: Երևումէ որ մեր ժողովուրդը բոլոր հարաւային ազգերին յատուկ կոդմեր էլ չունի,—թատրոն անդամ չէ սիրում, որը սիրումեն բոլոր հարաւային ազգերը: Թատրոնի դահլիճը այս դիշեր (նմանապէս և „Ռիչելիօի" ներկայացման ժամանակ) տվվեցաւ պ. պ. թատրոնասէրներին 200 ռուբլիով, իսկ ժողովուրդը շատ քիչ կար,—հաւանական է որ ներկայացնողները պարտքի մէջ կընկնեն: Երբ Թիֆլիսի հայ ժողովուրդը պիտի վերջապէս իր ազգական վոքր թատրոնիկ ունենայ.... Տիկին Սաթինիկը երկրորդ և երրորդ գործողութեան, պ. Ամերիկեանը վերջին գործողութեան, իսկ պ. Զմչկեանը ամբողջ պիեսայի մէջ այնքան աջողակ խաղացին, որ նոքա. որոնք շատ ուրիշ, օտարազգի բեմներ տեսած են, պիտի անկեղծ խոստովանեն, որ այդ երեք անձինք պատիւ կանէին ամեն բէմին:

—

„Մշակ" լրագրի խմբագրութիւնը ներկայացութեամբ ստացաւ պ. Սատակովսկուց իր բրոշիւր, որ է մի նախագիծ Թիֆլիսից մինչև Վլադիկավկաս երկաթուղու մասին: Խմբագրութիւնը իր պարտաւորութիւն կը համարէ յաջորդ համարներից մինի մէջ բրոշիւրի մասին կարճ մատենագրական տեղեկութիւն տալ իր ընթերցողին:

—

Թիֆլիսի բժշկական ընկերութեան հրատարակութեան հետ տվվեցաւ և գօկտօր Թարխանովից անցեալ ձմեռը Թիֆլիսում կարդացած ֆիզիօլոգիական դասախօսութիւնները:—Այս ապրիլի 5-ին բժշկական ընկերութիւնը կատարեց իր տարեդարձը:—Տրված հաշուից մենք մի հետաքրքիր տեղեկութիւն ենք քաղում. Թիֆլիսի հիւանդանոցում սրտի հիւանդութիւններից ամէնից յաճախ պատահումէ այն ձեր, որ, բժիշկ Մալինինի կարծիքով, գլխաւորապէս Կովկասի բնակիչների մէջ ծագումէ անչափ դինի գործածելուց, թէ մեծ թէ փոքր հասակում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՅ:

—

Մինչև որ շարունակվումէր Ֆրանս-գերմանական պատերազմը Գերմանիայի բոլոր ոյժը ուղղված էր մի նպատակի, — այն է յաղթել Ֆրանսիային: Պատերազմի ժամանակ Գերմանիայում ոչ հասարակական կարդեր կային, ոչ կուսակցութիւններ. փոխադարձ թշնամութիւնը և ատելութիւնը, ներքին կռիւը անկատարած էին: Նոքա բոլորովին մոռացել էին իրանց տնային հաշիները և ձեռք ձեռքի տուած գնում էին յաղթելու:

×

Բայց ահա վերջացաւ պատերազմը. Գերմանիան ընդհանուր նպատակին հասած է: Ֆրանսիան յաղթված է: Անկատար արտաքին վտանգը, որը կապում էր Գերմանիայի բոլոր ազգերը միմեանց հետ,—և Գերմանացիների կեանքում կրկին երևան են գալիս այն երևոյթները, որոնք պատերազմից առաջ սովորական երևոյթներն էին: Գերմանական պատգամաւորները աշխատումեն համաձայնութիւն պահպանել իրանց մէջ, նոքա Գերմանիայի միութեան վերա ճարտարախօսութիւններ են անում, և այն մեծ գործերի վրա, որ Գերմանիան կատարեց:

×

Բայց մի մեծ ազգ չէ կարող միշտ պատրաստել մեծ գործերով: Կեանքը իրանն է առնումէ: Բաւական է կռիւ, բաւական են չարչարանքներ և արիւնհեղութիւն:—Այժմ Գերմանիան միացած է,—թող աշխատի բարեկարգել այն, ինչ որ ստեղծեց:

×

Մինչև որ ամենքը համանման դրութեան մէջն էին, մինչև որ ամենքը մի և նոյն գործով զբաղված էին,—ամենքը Գերմանացիներ էին, մի և նոյն ազգի որդիք: Պատերազմը վերջացաւ: Հասաւ անային հաշիների ժամանակը: Ամենքը համոզված էին թէ հաւասար մասն ունին յաղթութեան մէջ և նորա պտուղներից ամենքը հաւասարապէս ուզումէին օգուտ քաղել: Բայց յայտնվեցաւ թէ, Գերմանացիների տեղ կային կաթոլիկներ և բողոքականներ, մշակներ և դրամատէրեր, միապետականներ և հասարակապետականներ, իշխան Բիսմարկի կամ Պրուսիայի կուսակիցներ և մարդիք, որոնք պահանջումեն ուրիշ գերմանական պետութիւնների համար, որոնք մտել են վերանորոգված Գերմանիայի մէջ, հաւասարութեան իրաւունքը:

×

Մանաւանդ սաստիկ կռիւ էր ծագել կաթոլիկ կուսակցութեան և տէրութեան, այսինքն իշխ. Բիսմարկի մէջ: Այդ կուսակցութիւնը, որի վերջնական նպատակն է վերականգնել Հռոմի պապի աշխարհական իշխանութիւնը և հպատակեցնել նորան ամբողջ Եւրոպայի տէրութիւնները առաջնորդվումէ եզուիտներով: Այդ կուսակցութիւնը ոչ մի միջոց արհամարհելի չէ համարում իր նպատակին հասնելու համար: Մանաւանդ նա ուսումնարանն է համարում իր գլխաւոր միջոցը:

Այդ սաստիկ միջոցին ընդիմադրութիւն անելու համար տէրութենից առաջարկված էր ուսումնարանների վերայ հսկութեան օրէնքը: Այդ օրէնքի զօրութեամբ ուսումնարանների վերա հսկողութիւնը պիտի պատկանէ պետութեանը:

×

Մի սաստիկ կռիւ նմանապէս շարունակվումէ աշխատողների և դրամատէրերի մէջ, և վէճի առարկան,—աշխատանքի վարձն է:

Դրէզդէնի հիւսները հրաժարվեցան աշխատանքից, եթէ տէրերը չը բարձրացնեն նոցա աշխատանքի վարձը մինչև 25%: Սորա նման շարժումները պատահել են Նիւրէնբերգում և ուրիշ շատ քաղաքներում:

×

Բէրլինում կար մի ժողովրդական ժողով, որտեղ հարկերի վերա խօսվեցաւ: Ատենաբաններից մէկը ապացուցանումէր, որ հարկը անհաւասար կերպով բաժանվումէ ազգի զանազան դասերի մէջ, և բոլոր ծանրութեամբ ընկնումէ աշխատող դասի վերա, որ այդ անարդարութեան պատճառը քաղաքային վարչութիւնն է, որ ծանօթ չէ աշխատողդրութեան հետ, և ուրեմն հարկաւոր է, որ քաղաքի վարչութիւնները ժողովրդից ընտրվէին և որպէս ընտրողները չ'պիտի մերժվին նաև ամենաչքաւոր դասը, սեփականութիւն չունեցող մշակները:

×

Բերենք այդ տեղ դարձեալ մի նշանաւոր իրողութիւն. Պրուսիայի վաճառականութեան նախարարին ներկայացաւ դերմանական աշխատողների ընկերութեան կողմից մի պատգամաւորութիւն և ներկայացրեց խնդիրքը, որ նոր օրէնքների մշակութեան ժամանակ աշխատողների կարծիքն էլ լսվէր:

×

Մեր անցեալ տեսութեան մէջ մենք յիշեցինք, որ աշխատող դասի գլխաւոր առաջնորդներից երկուսը դտնվումեն դատաստանական քննութեան տակ: Այժմ դատաստանը հաստատեց արդէն իր վճիռը: Բեբել և

Լիբկնեխտ մեղադրվում են, որ դիտաւորութիւն ունէին փոխել Գերմանիայի այժմեան պետական կարգը և ուստի դատապարտվում են, երկուսն էլ երկու տարվայ բանտարկութեանը: Նոքա իրանք կրկնեցին դատարանի առաջ, որ նոքա համոզված են, թէ հասարակապետական քաղաքական ձևը առաւել կատարեալ է և յարմար քան թէ միապետական, թէև նորան Գերմանիայի մէջ մտցնելու համար, նոքա բնաւ դիտաւորութիւն չունէին որ և է ստիպողական միջոցներ գործ դնելու:

×

Երբ այդ երկու պարոնների դատապարտման լուրը տարածվեցաւ, Գերմանիայի մի քաղաքի մէջ հաւաքվեցաւ մշակների ժողովը և միաձայն վճռեց հետևեալը:

„Մենք ամենքս այնպէս ենք մտածում, ինչպէս և պ. պ. Բեբել և Լիբկնեխտ. մենք ամենքս նոյնն էինք արել, և նոյնն ենք անում ինչի մէջ և նոքա մեղադրվում են: Ուստի մենք հրաւիրում ենք Գերմանիայի բոլոր պրոկուրօրներին սկսել մեր դէմ դատաստանական հետաքննութիւն“:

×

Կարելի՞ էր սպասել մի նման երևոյթին պատերազմի ժամանակ: Ոչ, այն ժամանակ միայն ամենածայրայեղ մարդիկ համարձակվում էին ընդհանուր տիրապետող հասարակական կարծիքի դէմ գնալ: Բայց նոցա ձայնը թոյլ էր և չէր լսվում պատերազմական միաձայն աղաղակի պատճառով:

×

Այժմ այդպէս չէ: Այն ինչ որ քանի մի համարձակ մարդիկ յանդգնում էին յայտնել, այժմ պաշտպանում է ժողովուրդը, ամբոխը:

Բոլոր ժողովրդական ոյժը, որ Ֆրանսիայի պատերազմի մէջ էր գործ դրվում, հիմի, պարզութեամբ կրկնապատկած, գործ է դրվում ժողովրդական դասերի և կուսակցութիւնների ներքին կռվի մէջ, այն կռիվը, որից այժմ Գերմանիայում սկիզբը են առում պետական նշանաւոր վերանորոգութիւնները:

ՄՇԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՐԿՐԻ ՁԱՆԱՁԱՆ ԿՈՂՄԵՐՈՒՄ:

(վերջ *)

Գերմանիայում թէպէտ քաղաքակրթությունը հաստատուած է պատմական ճանապարհով, թէպէտ ժողովուրդը հնարք ունի բարեկեցութեան ամէն աղբիւրներից օգուտ քաղելու, թէպէտ մշակի վիճակը այն տեղ անչափ աւելի լաւ է քան թէ Ցաճկաստանում, բայց այնու ամենայնիւ նախանձելի չէ: Դորա պատճառը անգ. կոնսուլները համարումեն երկրի անպտղաբերութիւնը Գերմանիայի հիւսիսային մասերում և բնակիչների խրոխտութիւնը: Շլեզիայում գիւղերում 45 — 70 կրէ դրական վարձատրութիւնը, իսկ քաղաքներում մի երրորդից մինչև կէսը աւելի, յայտնի բան է կանց և մանուկների համար աւելի փոքր է: Դորարաններում ծառայողների և արհեստաւորների վարձը միշտ աւելի է: Աշխատութեան միջոցը միջին թիւով 12½ ժամ է:

Թէպէտ և վերջին տասն տարուայ մէջ Շլեզիայի մշակների դրութիւնը շատ բանում լաւացել է, այց անու ամենայնիւ նա դեռ աղքատիկ և դժբարակիր է: Սաքսոնիայում վարձը աւելի բարձր է, որովհետև այդ փոքրիկ, բայց գործունեայ տերութիւնը շատ հարուստ է: Այս տեղի մշակը կարող էր ամէն կարիքից ազատ լինել, եթէ նորա ընտանիքը օրհնած չը լինէր բազմաթիւ որդիքով: Համեմատաբար Գերմանիայում ապրիլը աւելի էժան է քան թէ Ֆրանսիայում կամ Անգլիայում, բայց աւելի քիչ յարմարութիւններ ունէ. օրինակի համար 1863 թ. մսի քանակութիւնը մարդուս դալիս էր 35½ ֆունտ, ուրեմն աւելի քիչ, քան թէ միւս ծաղկած երկիրներում: Բնակարանի վարձը փոքր քաղաքներում է 70—100 գուլդէն, բայց նեղ տարածութեան մէջ կենալով ամբողջ ընտանիքը, տանումէ զանազան յաւեր:

Այս վիճակագրական տեղեկութիւններից երևումէ, որ թէպէտ և Գերմանիայի մշակը պէտք է պատերազմէ զանազան դժուարութեանց հետ, բայց այնու ամենայնիւ նորա դրութիւնը առաւել լաւ է, քան թէ Ցաճկաստանումը և վերջինս կարող է պարծենալ իւր վիճակով համեմատելով Աստօլիայի կամ Հայաստանի մշակի հետ, որոնք նոյնպէս բարձր են Եգիպտականներից կամ Չինականներից: Ուրեմն ծառայական դասի վիճակը կախուած է քաղաքակրթութենից, վաճառականութեան և արհեստների ծաղկածութենից, այսինքն թէ օրքան է մի երկրի մէջ դրամագլուխը շարժում:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում պայմանները աւելի յաջող են. նոցա ընդարձակ բերրի հողը ընակեցրած է ոչ շատ խիտ, բայց չը նայելով դորան այնտեղ շարժվումէ մեծ դրամագլուխ, կան պատրաստ օժանդակութիւններ ճիշդ դիտութիւնների նորանոր գիւտերի համար և իւրաքանչիւր գաղափարի գործունէութեանը տրուած է ազատ ասպարէզ: Որքան գաղթականութիւնը աւելանումեն նախնական անտառներում և մարգերում, այնքան աւելանումեն և մշակների վարձառատ պարապմունքը: Հարաւային նահանգների ստրկատէրերի դէմ արած պատերազմից յետոյ դրած ծանր մաքսերը ձեռագործների վերայ աւելի բարձրացրեց ճարտար գործաւորների վարձը:

Հիմնական համեմատութիւններից երևումէ, որ Միացեալ Նահանգներում արհեստաւորները շատ աւելի ապահոված են, քան թէ Եւրոպայում (միջին թիւով օրական վարձը 2—3 դօլլար կամ 270—400 կոպ.), իսկ օրամշակներինը մօտենումէ Անգլիայի ստորին կարգի ծառայողներին (1—1½ դօլլար): Սոցա՝ պատկանողը եթէ միայնակ է և չափաւոր կեանք է վարում, բաւական լաւ վիճակի մէջ է, իսկ եթէ ընտանիքի տէր է, նոյնքան կարիքի է ենթարկվում, որքան և Անգլիացին, որովհետև կանայքը շատ սակաւ վարձով են պարապմունք գտնում և տան ծառայութեան համար ընդունվում են միայն աղջկերքը և ամուլ կանայքը:

Կենսական հնարներից միսը այստեղ աւելի էժան է քան թէ Անգլիայում, հացը և պտուղները նոյնպէս են, ինչպէս այնտեղ, իսկ ձուն, իւղը, գարեջուրը, ածուխը և այլն աւելի թանգ: Բնակարանի վարձը խլումէ եկամուտքի մի նշանաւոր մասը: Թէպէտ մի քանի քաղաքներում ընդարձակ տարածութիւնը և գետնի էժանութիւնը թոյլ է տալիս մի քանի ընտանիքի ունենալ բազմաթիւ սենեակներ, բայց վարձը շատ թանդ է (լաւ տան համար 10—20 դօլլար): Անգլիացւոց գործակալների նկատմամբ Ամերիկայի մշակը այնպէս խնայող չէ, ինչպէս Եւրոպացին, իսկ անտեղի Գերմանացին իւր աշխատասիրութեան և ապագայի վերայ մտածելու շնորհիւ կրկազմէ ապագայում Միացեալ Նահանգների ժողովուրդի ամենահարուստ դասը:

Կալիֆօրնիան կազմումէ մշակների բարեկեցութեան ամենաբարձր կէտը: Թէպէտ իրերի դիրքը այժմ այստեղ այնպէս է ինչպէս Մ. Ն. միւս մասերում, բայց մշակի ամենապակաս օրավարձը 2 դօլլարից փոքր չէ. միայն կանայքը, մանուկները և Չինացիքը կարող են պակաս ստանալ: Մի քանի տեղերում (Ս. Ֆրանցիսկօ) նա հասնում է մինչև 3 դօլ., իսկ արհեստաւորների համար մինչև 4½ դօլլարի:

Վերջումը նկատումէ լրագիրը, որ մշակների վիճակը այն ժամանակն է լաւ լինում, երբ դրամագլուխը մեծանում է, տարածվում է ուսումը, երբ հաստատվումէ քաղաքական և հասարակական ապահովութիւն, և ամենայն փորձ ուժով փոխելու նորան պէտք է անյաջող լինի: Եթէ հարկաւոր է, որ իւրաքանչիւր ընտանիք ամենայն օր կարողանայ միս ուտել, պէտք է երկիրը շատ եղ, ոչխար, խոզ և այլն բերէ: Այդ մի պարզ ճշմարտութիւն է, թէպէտ և նա դուր չէ գալիս շատերին, որոնք հաւատումեն մի նոր հասարակական սիստեմայի դիւթական ուժին:

ՖՐԱՆՍԻԱ:

Զատկի տօնի ժամանակ Ֆրանսիական աղգային ժողով, ինչպէս սովորութիւն կայ, արձակվեցաւ և պատգամաւորները ցրվեցան գաւառները: Ապրիլի 22 կրկին նստերը կսկսվեն: Պատգամաւորները ճանապարհորդելուց յետոյ առաւել մօտիկ ծանօթացան ժողովրդի ոգու հետ: Բոյալիստների կուսակցութիւնը յուսահատված է, որովհետև ոչ մի տեղ համակրութիւն չէ գտել: Բացի սորանից նա թուլացած է և այն պատճառով, որ նորան կազմող երկու մասերի մէջ կայ երկպառակութիւն Կոմս-Շամբօրի, կամ ինչպէս նորան անուանումեն Հէնրի V, կուսակցութեան և օրլեանիստների կուսակցութեան մէջ: Ընդհակառակն Բօնապարտիստները շատ բաւական են իրանց կուսակցութեան աջողութիւններով: Նոքա մեծ եռանդով տարածումեն բրօշիւրաների միջոցով իրանց կուսակցութեան գաղափարը, և յարձակվումեն Տիէրի և նորա պաշտպանների վերա: Նոքա յոյս ունեն որ գալու ընտրութեան ժամանակ նոցա կուսակիցների թիւը ազգային ժողովում կաճի մինչև 100, իսկ դուցէ 150 հոգի:

Ոչ պակաս ուրախ են և իրանց դրութեամբ բաւական Տիէրի կուսակիցները, կամ ինչպէս նոքա իրանք իրանց անուանումեն հասարակապետականները: Նոքա իրանց յոյսերը նորա վերա են հիմնում, որ թուլացած և զղուած Ֆրանսիան վախենումէ ամէն նոր հարուածից:

Ազգային ժողովի գալու նստերի վիճաբանութեան առարկաներից մէկը կը լինի զօրքի վերանորոգութեան օրէնքը:

ՆԱՄԱԿ ԹԷՀՐԱՆԻՑ:

Իմ առաջին նամակների մէջ ձեզ տեղեկութիւն եմ տուել Պարսկաստանի սովի մասին, այժմ կրկնումեմ մի և նոյնը, թէ և այդ բաւականին ձանձրալի կը լիներ, բայց փոյթ չէ, որովհետև այդ է այժմ Պարսկաստանում մեր մտածութեան առարկան:

Երրորդ տարին է գնում Պարսկաստանը տանջվումէ զանազան դժբաղդութիւններով: Հացի պակասութիւնը, սովը, խոլերան, ժանտախտատենդը և պէս պէս հիւանդութիւնը, այս երեք տարուայ միջոցում անխնայաբար սպառումեն խղճալի ժողովրդի կեանքը: Այժմ որպէս լսումենք, մի քանի տեղերում երևցել են ժանտախտի նշաններ, եթէ այդ գուժաբեր լուրը ստոյգ էր, ժողովուրդը կը հասնէ իւր դժբաղդութեան ծայրայեղ վախճանին:

Բայց ինչպէս է նայում ժողովուրդը այդ սարսափելի երևոյթների վրա:—Նա տանումէ դորանց կարծես թէ մի ճակատագրական խոնարհութեամբ, նա համբերումէ, որովհետև նա վաղուց սովորել է համբերել ամէն դժբաղդութիւնների:

Պարսկաստանի ժողովուրդը, իւր կրօնական նախապաշարմունքներով, իւր սնահաւատ անգիտակցութեամբ, ընութեան ամէն մի զարհուրելի երևոյթներին տալիս է գերբնական նշանակութիւն:—Այդ խաւար աղդերի յատկանիշն է:

Պարսկաստանի ժողովուրդը նայումէ սովի, խոլերայի, ժանտախտի վրա որպէս պատիժների յուղարկուած Վերին վրէժխնդրութիւնից, նոցա յանցանքների պատճառաւ: Եւ նա խոնարհութեամբ համբերումէ Գերագոյն Էակի դատավճռին:

Այդպիսի դէպքերում, ամէն աղդերից բաղկացած ժողովուրդը իւր մօլլաների, ախունդների, սէիդների, տերտէրների, վարդապետների, և խանամների՝ միջնորդութեամբ, դիմումէ դէպի մէչիթները, եկեղեցիքը և քինիշտայները, աղերսելու Աստուծոյ դթասրտութիւնը և նորա ներողամտութիւնը:

Պարսկաստանի ժողովուրդը դեռ չը դիտէ և դորա վրա չէ մտածում, թէ մի տերութեան մէջ, ուր ամենեին հոգս չեն տանում հասարակութեան առողջապահական կանոնների վրա, հիւանդութիւնների, խոլերայի և ժանտախտի երևոյթները դառնումեն սովորական.

Պարսկաստանի ժողովուրդը դեռ չը դիտէ, և դորա վրա չէ մտածում, թէ մի տերութեան մէջ, ուր օրինաւոր կերպով չեն կանոնադրում հասարակութեան նիւթական տնտեսութիւնը, ժողովուրդը միշտ ենթարկվում է այն սարսափելի դէպքերին, որ մեռաներ սովից:

Պարսկաստանում և այսօրուայ օրում հացը մինչև այն աստիճան սպառուած չէ, որ ժողովուրդը սովամահ լիներ: Պարսկաստանի ամէն մի նահանգներում տակաւին դտանվում են դեռ դրան կնիքը չը լուծուած ցորենի ամբարներ: Դորա հարուստ կալուածատէրերի սեպհականութիւններ են, որոց տէրերը սպասումէն մահուան վերջին յաղթութեանը, որ աւելի բազմաթիւ զոհերի թանդ գնով վաճառեն կեանքի սնունդը: Նոքա սպասումեն քամել խղճալի աղքատների նիւթական զօրութեան վերջին ուժը, որ աւելի պարարտացնեն իրանց դրքանը:

Հասարակութիւնը սառնասրտութեամբ նայում է այդ կեանքի և մահուան պատերազմի վրա: Նա չէ մտածում, որ կալուածատէրերի ամբարների մթերքը, է նոյն հասարակ ժողովրդի ճակատի քրտինքի պտուղը, որ այսօր զրկվումէր նորա վայելքից: Նա չէ մտածում բացել այդ ամբարների դրները, որովհետև նոքա պատկանումէին, այս ինչ խանին, բէկին, մօլլային, հաջիին, որոնք կարող էին իրանց մեռած խղճմտանքով աւելի օգուտներ քաղել, մի այդպիսի դժբաղդ դէպքից:

Բայց ինչ է մտածում ստորին կարգի ժողովուրդը: Նա յիշումէ յուսահատի ճակատագրական խօսքը — Խուդայ քարիմ աստ (Աստուած ողորմած է) և համբերումէ.....

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԼԱՓ ԳԷՎՕ

Մէյդանի զլխին, Բերդի եկեղեցու մօտ, ալափների կարգում, այն նեղ փողոցում, որ տուն է տանում բաղնեներու մօտ, Գէվօն զուգած դարդարած ալափի դուքան ունէր, կէտովի մղոսի Առաքելի հետ: Ամէն մարդ՝ թէ նորա ընկերը, թէ ուրիշ համքրի ուստայ մարդը, շատ երնէկ էր տալիս նրա լաղթով կարդած դուքնին: Եւ ճշմարիտ, որի աչքը բարի նախանձով չէր լցնում, տեսնելով, թէ ինչպէս խստակ, մաքուր թարախները ապրանքով լիք, դարսած ու կարդած կը լինէին դուքնի երկու կողմը: Դուքնի առաջ կը տեսնէիք խստակ կաղնուց շինած դաղդէն կշռներով. կշռի մէկ թասը կախ արած պատի վրա, միւսը դաղդի վրա թողած, մի քանի դրուանքանոցները մէջը դցած: Ինքն էլ սպիտակ փեշտամալը առաջը կապած, կամ դաղդի առաջ կանգնած կը տեսնէիք, կամ թէ դուքնի առաջ. մի մեծ քարի վրա նստած ու անց ու դարձողների հետ խօսած, զրուցած: Զը կարծես, որ դուք նրան տեսած չը լինէիք. չի լինի որ նրան չը նկատէիք՝ բարձր հասակով, միջին հաստութիւնով, կարմիր ու թուխ երեսով, խելօք, սև աչքերով և սև միշտ կիսած ունքերով, էնպէս որ նրա դէմքին երբէք ծիծաղ չէր դայ, կարծես թէ այն մարդը այս աշխարհից չէր և թէ նրան այս աշխարհի ախալը չէ գրավում. այսպիսի մարդը, ում ուշադրութիւնը չէր դարձնի իւր վրա: Ցեղ տեղ նրա թուխ մազերի և սրած բեխերի մէջ խառն էր սպիտակ մազ. այնպէս որ նրա գլուխը, ինչպէս ինքն էլ ասում էր, երբ նրանից հարցնումէին թէ „Գէվօ էդ ինչ է դարի քու գլուխը“. նա միշտ ծանր կերպիւ, որպէս թէ մի բոլորովին հաստատ բան է ասում. պատասխան էր տալիս հարցնողին. „դալաքիանենցն իմ վաղի, գլուխս սապնած իմ թոդի“: Ինքը այս ժամանակ շուռ կը դար· իսկ հարցնողը ծիծաղից կը թուլանար և կը չարունակէր այս բանի մասին նրանից հարց ու փորձ անելը· բայց Գէվօն էլ ոչինչ չէր ասի հարցնողին կամ կը թողնէր հետաքրքիր մարդուն առանց պատասխանի, կամ խօսքը կը դցէր ուրիշ առարկայի վրա. սորանով կամենումէր յայտնել, որ հանաքը լաւ է մէկ անդամ և թէ յետոյ նա իրա լաղթը կորցնումէ:

Ամառ թէ ձմեռ Գէվօի հագուստը մէկ էր՝ լեգդի չալից դեղին չոխայ, չթէ բամբակած ախալուխ ու ծաբլէ ռանդ բուխարի դդակ, որը երբէք գլուխից չէր հանում: Ճաշ ուտելիս, որտեղ որ լինէր, տանը, թէ դօնաղ, նա դդակը ծածկած պէտք էր ունենայ· չոգելուց մի փոքր կը բարձրացնէր ճակատի վրա և այնպէս կը ստանէր մինչև որ քրտինքը կը ցամքէր և յետոյ դդակը էլի իրա տեղը կը դար: Հադին ունէր նա միշտ խարազի վաքսի կօշիկներ մեծ նալչով: Մինչև այժմ ես չեմ իմանում, թէ ինչ պատճառաւ Գէվօն այդ տեսակ կօշիկները աւելի յարգումէր ու պատվում: Ամէն մարդու, լաւ յայտնի է որ այդպէս կօշիկներ հագնելուն մեծ դաւիդարարայ է հարկաւոր, այս չոտկի առ սրբելու համար, այն տեղ էլ վաքս է պէտք դալիս· այս սրբիր, պլպլացրու···սորա համար աւելի ծախս ու գործ է հարկաւոր· բայց այդ փեշարար մարդուն լայեղ չէ: Զէ, Գէվօն այդ բոլորը շատ հեշտ էր տանում: Ամէն մի քանի դրօշ յետ էր դցում վաքսի համար, իսկ սրբելու հոգսը ինքն էր քաշում: Առաւօտը վերկենալուց, դուքան դրնալուց առաջ, մինչև որ նրա կնիկը թէյի պատրաստութիւնը կը տեսնէր, Գէվօն, դուրսը բազում, շատ ծանր կերպիւ, սրբում խտակումէր իրա կօշիկները: Յետոյ մի քանի բաժակ թէյ խմելուց յետոյ դուրս կը դար տանից և աչքերը բարձրացնելով դէպ ի երկինքը. նա քանի մի անդամ կը խաչակնքէր երեսը և կը դիմէր դէպի իրա դուքան: Նա կենումէր Հավլաբարում: Կարմիր Աւետարան ասացեալ եկեղեցու կողմով անցկենալիս, նա դարձեալ կը խաչակնքէր երեսը և եկեղեցու դուռը համբուրելով, կը չարունակէր իրա ճանապարհը: Այն ճանապարհի վերայ Գէվօն շատ ծանօթներ ու բարեկամներ ունէր և մինչև որ Հավլաբարից մէյդան կը հասնէր քանի ու քանի „բարի լուս... ուստայ Գէվոյ“ կը լսուէր և ուստայ Գէվօն նրանց բարեւելով, միշտ ծանր կերպիւ և մեծ քաղաքավարութեամբ պատասխան էր տալիս „Աստուած բարի տայ“ էս կամ էն անունը աւելացնելով: Մարդ չը կար էն ճանապարհի վերայ որ Գէվօն չը ճանաչէր և միենոյն ժամանակ չը պատուէր: Եւ ճշմարիտ Գէվօն իրա դէմքով և բարոյական վարքով թէ բարքով մեծ յարգանք ու պատիւ էր յարուցանում ամենքի սրտի մէջ: Մի և նոյն ժամանակ չը կար մարդ, որ նրանից ստացած չը լիներ թէ բարոյական կամ թէ նրա խեղճ դրութեան համեմատ նիւթական օգնութիւն: Հավլաբարի ուստաներն

*) Տես „Մշակի“ № 14 1872:

ՈՂՋ վեճ կամ կռիւ պատահելիս, Գէվօին պէտք էր անպատճառ կանչել և իմանալ նրա վճիռը ու խորհուրդը. և նրա դատաստանից երկու հակառակ կողմը միշտ բաւական էր մնում. Թշնամիքը նրա մանակցութեամբ դառնում էին առաջի ընկերներ և բարեկամներ. ուր որ գնար, ամէն տեղ բերում էր հաշտութիւն ու խաղաղութիւն և ոչ ոք չէր գանգատվում նրանից։ Համքարի ուստէնագրկան մարդու տալիս կատղին նշնելիս անպատճառ Գէվօից կը հարցնէր ու նրա խորհրդից կախ էր նրանց բաղդաւորութիւնը։ Նա ունէր մի առանձին ոճ խօսելու և նրա խօսքերը անմեղ չէին կորչում։ Քանիցս անգամ նա էդ կերպիւ գուրս է եկել համքարի ժողովներում. մանաւանդ երբ գործը հասնում էր համքարի որ և իցէ բարեկարգութեան հարցերին։ Այս ժամանակ էն աղաւնին, էն հեզ ու խոնարհ բնաւորութեան տէր մարդը արծիւ էր կերվում. ով կարող էր էն ժամանակ տանել նրա վառված, կրակած սև աչքին, ինչպէս նա անց էր կացնում մէկ մարդից դէպի միւսը, կամենալով աւելի համոզացնել լսողներին. և ճշմարիտ նա հասնումէր իրա նպատակին՝ նա աղդումէր ուղղակի նրանց որտի ու մտքի վրա։ Մէկ խօսքով էն մարդը մի սուրիչ տեսակ մարդ էր և եթէ նրա ձեռքին լինէր նիւթական ոյժ, ինչեր չէր անի. ՝ի բարոյական գործը չէր դուրս գայ նրա ձեռքից։ Բայց Աստուած չը կամեցաւ տալ նրան էդ ուժը և ինքն էլ շատ չէր փոչմանում։ Նա միշտ ասումէր՝ ինչ հարկաւոր է փեշաքար մարդուն հարստութիւնը, նա էնքան պէտք է ունենայ որ սովից չը մեռնի և նրա ընտանիքը ու ինքը կուշտ լինին։ Յետոյ աւելացնում էր՝ „դուրթ է, ինչպէս աղքատութիւնը, էնէնց էլ հարստութիւնը մէկ ցաւ է“. և ծաղրածու կերպիւ ապացուցանելով էդ միտքը, նա կը շարունակէր, „Ընդուր ին ասում, թէ փլան փլան մարդը չէնացաւ, աղքատացաւ, կու նշանակի, վուր ցաւի մէջ ընկաւ“.

Զարմանալի չէր, որ էն մարդը էն պատուի ու սէրի հետ և շատ թշնամիք ունէր. և ով էր նրա թշնամին, դժուար թէ կարելի էր հաւատալ. մի մարդ, մի անձն, որից չէր կարելի սպասել. նրա ընկեր մղդի Առաքել մանաւանդ նրա հակառակ ու նրա դէմ խօսող մարդ էր։ Թէպէտ Գէվօն ինքը էդ լաւ գիտէր. բայց կարծումէր, որ մարդոց հետ քաղցր վարվելով, մարդուն հաւատ ընծայելով, կարող է մարդու սիրտը շահի ու խաղաղութիւնով ապրի. բայց էդ մտքով իսկ Գէվօն շատ սխալվումէր ու նրա անբաղդութեան ու վաղօրեայ մահուան պատճառը դարձաւ մի էդպիսի խաբեբայ կարծիքը։ Այո՛ հայ մարդը չի սիրում ընկերական գործը. նա աշխատում է չարի վրա գործածել ընկերոջ հաւատարմութիւնը, որ ինքը միայն կանգի տէր ու տիրական էն գործի, որ առաջ է եկել երկուսի աշխատութիւնով։ Պէտք է խոստովանել, որ կայ մեր մէջ էդպիսի վատ ոգերութիւն։

Դուքան հասնելուց նա կը համբուրէր Բերդի եկեղեցու դուռը և յետոյ կսկսէր դուքանի դառարէքը հանել։ Մինչև աչակերտը դուքանը կարգի կը բերէր, թաբախները դաղդի վրա կը շարէր ու կշեռքը կը կախանէր, Գէվօն մէկ քիչ կը դիպչէր Մէյդանի կողմը, էստեղ, էնտեղ կը մանդար, կը նայէր։ Էն օրուայ բերած ալիւրի ջվալները շատ կիտած որ տեսնէր, մէկ ծանր կերպիւ երեսը կը խաչակնքէր ու կասէր. „Աստուած բարաքայ տայ“ և մի քանի տեղերում էլ զանազան ապրանքի մաղանդէն կը հարցնէր ու կը դար իր դուքանը, որ էն ժամանակ արդէն կարգի բերած կը լինէր։ Ինքն էլ մաքուր փեշտամալը առջևը կապելով թաբախների մէջ ածած ապրանքը քիչ կը խառնէր.—յետոյ կերթար հարևան ալափների հետ խօսելու։

Մէկ ալափ Գէվօն էր, մէկ քաղաք. մարդ չէր անց կենայ, թէ քաղաքացի, թէ դուքնի տէրը, որ չէր կանգնի ու Գէվօի հետ խօսք չէր բացանի։ Գէվօն ամէն բանը գիտէր, թէ մէյդանում դարսած ապրանքների մաղանդէն, թէ ուրիշ ափալները, որ հարկաւոր ժամանակ պատուելի մարդուն կը՝ազդրդէր։ Շատ փայ քաղաքացիների տան համար առուտուր անողը նա էր։ Ամէն Աստուծու օր նրա դուքնի առաջ դաստայ դաստայ ծառաները կանգնած կը լինէին. սրանց հերթով ճանապարհ կը դէր, ղրկելով նրանց պարոնների համար առօրեայ կերակրեղէնը։ Թազայ մօթալ դուքար, թէ ինչ ասեմ, թուրքի թուլուխով մածուն կը բերէին, Գէվօն ամէնից առաջ կու առնէր ու կը ղրգէր նրանց համար. ամա մէ բանը նրա կարծիքի դէմ էր։ Հայի թանգութեան ժամանակ շատ անգամ պատուելի քաղաքացիները վրէն կը չոքէին, աղաչանք, պաղատանք կանէին, ինչեր չէին խոստանայ Գէվօյին, որ նա մէ քանի փութ ալիւր աւելի առնի նրանց տան համար ու ղրգէ. ամա Գէվօն քար կը կորուէր ու չէր առնի։ Նա միշտ ասումէր սորա մասին, թէ հայի էժնութեան ժամանակ ամէն մարդ, թէ աղքատը, թէ հարուստը բարեբար է. ամա թանգութեանը պէտք է աղքատին խղճալ, որ նրան էլ հայի փայ ընկնի որ սովից չը մեռնի։ Ահա ինչպիսի մտքեր էր տարածում էն անուսումն, անկիրթ, բայց. բնական խելքով մարդը, ինչ անես, ասողին լսող գուզէ. իսկի ասիս լսումէին նրան...։

Մէնակ տղայ մարդիկ չէին գալիս նրա դուքնի այցելութեան։ Պառաւ ձալօն բաղնիս գնալիս ու Գէվօի դուքնի առաջ անցկենալիս, պարտաւորութիւն էր համարում իրա համար մէկ բարիլուսը կամ բարիրիգունը ասել Գէվօյին։ Եւ յետոյ կսկսէր ծանր ու բարակ հարց ու փորձ անել Գէվօից զանազան բաների մասին։ Բողչաներով չալված բըջին, որին միշտ բաղնիս գնալիս մեր կնկդերանց յետևից կը տեսնէք մէկ ձեռով պստի երեխի ձեռը բռնած, մէկէլ ձեռին սաթիլը ու արգարդանը—ու քօրինէն էլ բօղչի հետ մէջքին կապած—միշտ կու պատուիրէր։ „Մտիկ, բիջօ, էս մարդուն չը մոռանաս, ղրգելիս սրա մօտ արի.“ Ինքը մէքիչ դուքնի առաջ քարի վերայ կու նստէր, իսկ բջին առաջ կը ղրգէր, որ բաղնում նրա համար լէն ու բօլ տեղ բռնէ։ Եւ փոքր հանգստանալուց յետոյ ինքն էլ կը շարունակէր իրա ճանապարհը։ Մինոյն տեսարանը, բայց ուրիշ ձևով կը տեսնէիք դուք ձալօին բաղնիսից յետ գալիս։ Գէվօն հեռուից կը նկատեր թէ չէ, առաջ կերթար և ծանր կերպիւ ձալօյին „բաղնիսդ անուշ“ ասելով, կը նստացներ դարձեալ էն քարի վերայ. ինքն էլ խոկոյն աչկերին կը վազեցնէր բերդի եկեղեցու մըղդսից խելաղով սառը ջուր ուզելու։ Սառը ջուրը խըմելուց, մէքիչ հանգստանալուց, յետոյ պառաւ ձալօն բարև կը տար Գէվօյին ու մէկ անգամ էլի բջի ուշադրութիւնը կը դարձնէր Գէվօյի վերայ, որ նա նրա երեսը չը մոռանայ ու կերթար իրա ճանապարհով։

Մէնակ քաղաքում չէր յայտնի Գէվօյի դուքանը, չէ, քաղաքից էլ դուրս, շատ հեռու տեղերում։ Մուշի կամ Ստամբօլի մէկէլ երկրներից եկած մշակներուն շատ ծանօթ էր Գէվօն և մինչև հիմի էլ չեն մոռացել նրա ազնիւ և բարի բնաւորութիւնը։ Շատերին յայտնի է, որ էն տեղերից ամէն տարի, գարնան ժամանակ, դաստայ դաստայ զարիբ խալիբ գալիս է քաղաք մշակելու և մինչև աշունքը մնալով էստեղ նորից վերադառնումէ իրա երկիրը։ Մինչև որ քաղքումն էին, նրանք սովորութիւն ունէին ամէն երեկոյ մէկ մէկ բերում ու պահ էին տալիս Գէվօին իրանց մշակած փողը թէ ապրանքը և վերջը երբ պատրաստվում էին գնալու իրանց երկիրները, իրանք իրանք առանց Գէվօին կը գնային նրա տունը ու ամէն մէկը նոցանից կը ջոկէր զանդուկի միջից պահուած ապրանքը կամ քսակներով փողը և օրհնանք տալիս նրան. ընկնումէին իրանց ճանապարհը։ Աբա թէ միանգամ մէկ բան կորած լինէր նրա զանդուկից. չէ, Գէվօն էն զանդուկը պահելիս շատ զգոյշ էր և ընդունակ էլ չէր չարի վերայ գործածել նրանց հաւատարմութիւնը։ Ընդհակառակն, նա միշտ էն էր ասում թէ՝ խեղճ մարդուն, որը իրա քրտինքով փող է աշխատում, պէտք է յարգել. իսկ էն մարդուն, որ անգործ անբան կերթրեվ գար փողոցներում, թշնամի հետ էր, հաւասարում։ Ընդուր նրա առաջի պայմանը էն էր որ իրա տան մէջ չը տեսնի էդ անգործունէութիւնը ու պարապ նստելը։ Եւ ճշմարիտ որ չկար, ու ամէն մինը նրա տան մէջ իմանումէր գնահատել գործ ու աշխատութիւնը և կարողութեան չափ աշխատումէր մանակից լինել տան մէջ եղած խաղաղութեան և ուրախութեանը ամէն մէկը նրանցից միևնոյն ժամանակ թէ մեծը թէ պստիկը մեծ յարգանք ու պատիւ էր ստանում։ Ով կը կարծէր, որ այս տան խաղաղութիւնը պէտք էր շուտով խանգարուի և նրա բնակիչները որբ ու անտէր մնային։ Ոչը, եթէ այն ինչին քանը չէր առաջացրել նրանց կորուստը։

Չեմ կարող ասել, թէ Գէվօի կեանքը որքան էլի կը, տեսէր եթէ այն անիծեալ հանգամանքը չէր հարցրել նրան մինչև մահը։ Բայց նայելով նրա առողջ կարմիր երեսին, նրա հաստատ ու վայելչադէմ մանդալուն, կարելի էր համարձակ ասել, որ այդ մարդուն դեռ այդպէս շուտ չէր հասնի մահուան ազաղակը։ Տարաբաղտաբար մենք սրխալվեցանք. չարակամ մահը վաղօրօք հասաւ նրան և անողորմաբար գլորեց նրա մարմինը այն փոսը, որտեղից դուրս գալու կարողութիւն էլ չունէր։ Նա մնաւ և նրա հետ էլ մեռան և նրա ծանօթները և բարեկամները և մնացին կենդանի և շատ տարի ապրելու յոյս ունին այն չար մարդիկը որոնք հասցրին նրան այն տեղը։

Նրա մահուան պատճառը հասարակ էր. այս էր. աշնան ժամանակ Գէվօն մի քանի օրով գնացել էր քաղաքից դուրս չրջակայ գիւղերը ձմեռվայ համար պաչար պատրաստելու։ Նորա բացակայութեանը դուքանը կառավարումէր նրա ընկեր Առաքելը։ Ինչ դաղում ցոյց տուեց Առաքելը Գէվօին, երբ նա վերադարձաւ դիւղերից, դա հեշտ կարելի էր իմանալ։ Երևակայեցէք ձեզ դուք Գէվօի զարմանքը ու դարդը, երբ տեսաւ նա իրա լիք թողած դուքանը բոլորովին դարդակ ամէն բանից և դռխլումը անհամար պարտք։ Գէվօն մինչև այդքանը չէր սպասում իրա ընկերոջ տարամտութիւնից. Այդ պատահմունքը վիր էր նորա ուժից և չը կարացաւ դիմանալ. մի քանի ամիս էլի կարողացաւ տեսնել աշխարհի լոյսը, թողնելով իրա ընտանիքը առօրեայ հացին հասարթ։ Այսպիսի մարդը ուրիշ կերպիւ չէր մեռնի, եթէ ոչ այնպէս, այսինքն ըստ բաւականին մօտից տեսնելով կեանքը և աշխարհիս մէջ կեցած մարդիկներին, համոզուելով այն բանի մէջ, որ աշխարհում միանգամայն էլ ազնիւ մարդուն ոչինչ չի մնում սպասելու նրանցից. արտասանում է վերջին անգամ մի բաղմանշանակ խօսք, յայտնի ամենեցուն „մախլաս“ և տալիս է հոգին իւր Տիրոջ, տանելով իրա հետ դերեզմանը սէր դէպի երկնաւոր թագաւորը և դէպի իրա նման մարդիկ, ցանկանալով սրանց համար այս ունայն աշխարհում միայն և եթ յառաջադիմութիւն գործքերի մէջ։ Այս էր ասում նա միշտ և այս խօսքերը ևս չրթունքի վերայ ունէր նա, երբ բաժնեց վերջին համբոյրը իրա ընտանիքին, որոնք արտասունքը աչքերում, դողդողալի ընդունումէին նրանից այն հրաժարական համբոյրը, խոր սրտի մէջ տպաւորելով նրա վերջին խօսքերը։

Ա. Բ.

ԹԻՖԼԻԶԻ ՓՕՍՏԸ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.	Ռուսաստան, Արտասահման, Քութայիս, Դարբանդ և Երևանի գաւառը։
ԵՐԵՔՇԱԲԹԻ.	Բաքու, Գանջա, Շուշի, Շամախի։
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ.	Քութայիս, Ռուսաստան, Արտասահման, Երևան, Ախալցխա Դարբանդ։
ՀԻՆԳՇԱԲԹԻ.	Ռուսաստան, Արտասահման։
ՈՒՐԲԱԹ.	Քութայիս, Երևան, Ախալցխա Զակաթալ, Նուխի։
ՇԱԲԱԹ	Բաքու, Ռուսաստան, Արտասահման, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(ապրիլի 27-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպերիալ)	6	ռ.	7½
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս.	6	„	75
վճարելիք (լիրա Օսմանեան) .	6	„	75
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.			թոյլ է
„ Ամերիկայի սերմից .	7	„	20
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի անքօք	13	„	50
ՇԱՔԱՐԸ Ռոսի (Բրօցկու)	9	„	40
„ „ միւս տեսակը . .	9	„	—
„ զաղրանիցու տրանցիդ.	5	„	80
մաքսը վճարած . . . . . , ,	8	„	80
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռոսի.	8	„	50
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ռուսաստանի բերքը փութը. . . .	3	„	50
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ախվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում). . . . . № 1 փութ	2	„	50
„ № 2 „	2	„	20
„ № 3 „	2	„	—
ԱԼԻՒԻՐԸ Գեանջու հասարակ . .	1	„	50
„ Շորագեալու.	1	„	60
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	14	„	—
„ Մարտինիկոյի, ցածրը .	11	„	50
„ Մօկո, շատ լաւը . . .	15	„	—
ՊՂՊԵՂԸ.	11	„	—
ԵՐԿԱԹ.	2	„	20
մինչև	3	„	50
ՄՕՄ	11	„	80

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(ապրիլի 25-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ 32¾ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ 346½ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

ԲԱՄԲԱԿԸ Նիւ-Օրլէանի ածէ ֆունտը 11⅓ պէնս

Ուպլանդի „ „ 23⅞ „

ԼԻՎԷՐՊՈՒԼ. բամբակի վաճառականը հաստատ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Միանսարեանցի տպագրութեանց գները այսուհետև 40% մինչև 60% զիջուցած են, ժողովրդեան համար առաւել դիւրամատոյց լինելու և ամէն մի առանձին ցանկացողի դիւրութեան համար, տպագրողը այսուհետև պատրաստ է ուղարկել ցանկացողներին ամէն մի տպագրութիւնից որքան օրինակ որ կամենան կամ մի հատ այն ամենայն անձանց, **որոնք ուղղակի Պետերբուրգ տպագրողին կը դիմեն,** կանխիկ ուղարկելով նշանակած դրամը, այդպիսի հասցէով. Въ С. Петербургъ, Михаилу Месроповичу Міансарову, на Михайловской площади, домъ № 2/3 Жербина, кв. № 5.

1) **Քնար Հայկական:** Պետերբուրգ, 1868. 8-ծալ. Հայկական Քնարի առանձին **այբբենական ցանկը** տպած 1870 թ. բացի Քնարի հետ տպած սիստեմատիկական (կարգաւորեալ) ցանկից։ 8-ծալ.—ամէնը 744 էջ, մանր տիպ **մի օրինակ** փոստայի ծախսով միասին Ռուսաստանի և Կովկասեան քաղաքները 1 ռուբլի 30 կոպէկ։

Հինգ օրինակ, նոյն փոստայի ծախսով 5 ռուբլի։

Տասը օրինակ 10 ռուբլի։

2) **Խնամատարութիւն երեխայոց մարմնական և բարոյական,** շարադրեալ Կոմբ'ի, անգլիացւոյ թագուհու բժշկի, հանդերձ զանազան հաւելուածներով տպագրողի կողմից։ Պետերբուրգ. 1868 թուին ութածալ, էջ 300, **մի օրինակի** գինը փոստայի ծախսով 80 կոպէկ։

Հինգ օրինակի գինը 3 ռ. 50 կոպէկ։

3) **Ազգային կրթութիւն** Էդուարդ Լաբուլէի. ա) Ինքնակրթութիւն. բ) ազգային կրթութիւն. գ) ժողովրդական դրատունները.—Պետերբուրգ. 1867 թ. 8-ծալ. էջ 108, հանդերձ յաւելուածով տպագրողի կողմից **մի օրինակ** փոստայի ծախսով 40 կոպէկ։

Հինգ օրինակ 1 ռ. 50 կոպէկ։

Վերոյիշեալ գնով մի և նոյն գրեանքը կարելի է գտնել Թիֆլիզում (առանց միւս քաղաքները Թիֆլիզից ուղարկելով) տպագրողի սեպհական տան Հայոց Վանքի Մեծ և փոքր փողոցների անկիւնում և Թիֆլիզու գրավաճառների մօտ։

Մամուլի տակն են

և մինչև յունիս պատրաստ կը լինին Պետերբուրգում, իսկ յուլիսին Թիֆլիզում նոր աշխատասիրութիւնները Մ. Միանսարեանցի.

ա) Կանոնաւոր վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, հանդերձ զանազան յաւելուածներով, ստուերագրերով (պատկերներով) գրագրական գրասեղաններին վերաբերեալ, նոցա նրա տարաններին, մարդկային կազմվածքին (20 հատ անատոմիական պատկերները) և այլն (Պետերբուրգ 1872 թ.)։

բ) Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան դաղափարները միմիայն մեր սովորական գրութեան վերաբերեալ աստիճանաբար կարգաւորեալ վարժութիւններ, 20 օրինակից բաղկացած (Պետերբուրգ և Լէյպցիգ. 1872 թ.)։

գ) Նոյն, հինգ առանձին վարժութիւնների բաժանած, 42 երեսից բաղկացած, գունակ թանաքով տպած, որ նորա վերա ուսանողները սկզբնական պարապմունքի ժամանակ սև թանաքով գրելով դիւրաւ ընտելանան կանոնաւոր գրելուն գրիչը կանոնաւոր վարելուն (Պետերբ. և Լէյպցիգ 1872 թուին)։

Leçons de tenue des livres en parties doubles (pour le commerce, fabriques, banques etc.) et d'arithmétique du commerce en langues française, armeniénne, anglaise et russe.

Le cours ne dure pas plus de six mois.

S'adresser á M. Khatchatourian, Rue du Laboratoir, maison Psaroff en face le jardin de son Altesse Imperiale.

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Мая, 1872 г. Ծերեթելի և ընկ. (նախկին Դուբէլիրի) տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի։